# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

«3 » հունիսի 2026 թվականի N:194 - Ա ք. Գյումրի

ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N:1392-Ն որոշման 2.2-րդ և 6-րդ կետերի, նույն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 60-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N:1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Հասմիկ Հակոբյանի 2026 թվականի հունիսի 2-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 40 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Հասմիկ Հակոբյանին տրամադրել 25 աշխատանքային օր ամենամյա երկարացված արձակուրդ՝ 2026 թվականի հունիսի 8-ից մինչև հուլիսի 10-ը ներառյալ:

2. Հասմիկ Հակոբյանի արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 40 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի գործառույթների իրականացումը վերապահել նույն կազմակերպության տնօրեն Հայկ Հարությունյանին:

Ա.ԱՅՎԱԶՅԱՆ
փոխարինող

Իսկականի հետ ճիշտ է